ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԸՍՏ ՕՍՄԱՆՅԱՆ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՖԵՐՄԱՆՆԵՐԻ (XVI—XVIII դդ.)

Ա. Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ոչ մահմեդական ժողովուրդներն աշխարհիկ և հոգևոր «արտոնություններ» ստացան սուլթան Մեհմեդ II-ի (1451—1481) գահակալության շրջանում։ Այլադավան հպատակներին աշխարհիկ և հոգևոր իշխանություն տալով սուլթան Մեհմեդ II-ը և նրա հաջորդները ջանում էին համայնքների համակարգը ծառայեցնել իրենց նպատակներին։ Նրանք օգտագործում էին պատրիարքների հեղինակությունը հպատակներին հլու հնազանդ և օտար պետությունների ազդեցությունից հեռու պահելու համար։ Հարսանիքը, ապահարզանը, գույքային և կենցաղային վեճերը լուծվում էին տվյալ համայնքի կրոնական օրենքներով։ Նրանց միջոցով գանձվում էին տարբեր տեսակի հարկեր թե՛ պետության օգտին և թե՛ տվյալ պատրիարքության համար։

Սուլթան Մեհմեդ II-ի և նրա անմիջական հաջորդների ֆերմանները, որոնք վերաբերում էին հույն և հայ պատրիարքների «առանձնաշնորհումներին», չեն պահպանվել։ Այդ ֆերմանները չեն հայտնաբերվել ո՛չ հույն, ո՛չ հայ պատրիարքարաններում և ո՛չ էլ Օսմանյան կայսրության արխիվներում։ Շատ հավանական է, որ դրանք ոչնչացել են Կ. Պոլսում բռնկված հրդեհներից։ Միայն հետագա պատմագիրներն են արձանագրում այն փաստը, որ Մեհմեդ II-ը Կ. Պոլիսը գրավելուց հետո հույն և հայ համայնքների համար հատուկ ֆերմանով հաստատել է պատրիարքարաններ։

Հայ համայնքի (Ermeni milleti) պատրիարքությունը հատուկ հրովարտակով հաստատվել է 1461 թ., այն ժամանակ, երբ Մեհմեդ II-ը, Բուրսայի Հովակիմ եպիսկոպոսին տեղափոխելով Կ. Պոլիս, նշանակեց պատրիարք։ Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հովակիմ եպիսկոպոսով չէ, որ սկսվում է հայոց պատրիարքության գոյությունը Կ. Պոլսում։ Փաստերը վկայում են, որ Կ. Պոլսում հայկական հոգևոր առաջնորդություն է եղել դեռևս բյուզանդական կայսրության օրոք։ 1360 թ. Կ. Պոլսում հայերն ունեին Ս. Սարգիս եկեղեցին և նրա շուրջը համախմբված հայկական համայնք։

Մեզ հասած ամենահին սուլթանական հրովարտակը, որը հաստատում է հայոց պատրիարքության իրավունքներն ու պարտականությունները Օսմանյան կայսրության սահմաններում, 1764 թ. հունիսի 3-ին Գրիգոր Պասմաճյանին (1764—1773 թթ.) շնորհված բերաթն է, որն առաջին անգամ հայատառ թուրքերենով հրատարակել է Ա. Բերբերյանը[1]։ 1774 թ. հունվարի 22-ին սուլթան Աբդուլ Համիդ I-ը (1774—1789) համանման բերաթ է շնորհել նաև Զաքարիա պատրիարքին (1773—1781), որի հայերեն թարգմանությունը՝ «Ազգիս հայոց պատրիարք Զաքարիա աստվածաբան վարդապետի պատրիարգության խատտի շերիֆի հայկական թարգմանյալ օրինակն է» վերնագրով

---

1 Ա. Պերբերյան. Հայոց պատմություն. Կ. Պոլիս, 1871, էջ 227—233։ Վերջին շրջանում Թուրքիայում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ Ստամբուլի «Մինիստրների խորհրդի» և «Թոփքափու պալատի» արխիվներից բացի մեծ թվով դաֆթարներ պահպանվել են նաև «Ջյամիլ Քեփեջիի անձնական հավաքածուում»։ Թուրք պատմաբան Ցավուզ Էրշանի տվյալներով այս հավաքածուում ամենահնագույնը 2539 համարի տակ գտնվող դաֆթարում ամփոփված 1517 թ. Ցավուզ սուլթան Սելիմի (1512—1520) կողմից Երուսաղեմի հայ պատրիարք Սարգիս Գ-ին տրված հրովարտակն է։ „Belleten", 1984, № 188, S. 1120.

հրապարակված է «Դիվան հայոց պատմության» մեջ[2]։ Ընդհանրապես, համայնքների կողմից ընտրված կրոնական առաջնորդը հաստատվում էր կայսերական հատուկ բերաթով, ուր սովորաբար կրկնվում էին նախորդ սուլթանների կողմից տրված հրամանները։ Այս մասին սուլթան Աբդուլ Համիդ I-ի կողմից շնորհված ֆերմանում կարդում ենք՝ «Զի բոլոր և համանգամայն ֆէրմանք և հրամանագիրք առ նախնեօք մեծազօր արքայից, կրկին և վերստին նորոգիցի և հաստատիցի ընդ որս և հրամայեցաւ ի տերութենէ նորոգիլ և ֆէրմանքն մեծի Պոլսուոյս»[3]։ Այնուհետև բերաթում նշվում էին համայնքի կրոնական առաջնորդի վարչական իրավունքները իր հոտի նկատմամբ, ինչպես նաև կրոնական ծիսակատարությունները, որոնք յուրահատուկ էին տրվյալ համայնքին։ Այդ բոլորը, ինչպես նշվում էր հրամանագրերում, չպետք է հակասեին շարիաթի դոգմաներին։ Այդ բարձր բերաթները շաղախված էին լինում կեղծ խոսքերով և փքուն խոստումներով, որոնց մեծ մասը, բնականաբար, չէր գործադրվում կյանքում։

Հայոց պատրիարքությանը շնորհված բերաթների բովանդակությունը ցույց է տալիս, որ հայ համայնքի կողմից առաջադրված յուրաքանչյուր նոր պատրիարք պարտավոր էր 100 հազար ակչե[4] միանվագ նվիրել սուլթանական գանձարանին, որպեսզի ձեռք բերեր իր պաշտոնին նշանակվելու բերաթը։ Այնուհետև պատրիարքը պարտավոր էր հայ համայնքից հավաքել «Միրի մուկաթաա» հարկը (100—1400 հազար ակչե) և հանձնել կառավարությանը։ Այս հանգամանքը խիստ շահագրգռում էր սուլթաններին հաճախակի փոփոխելու պատրիարքներին, որպեսզի ամեն մի նորընտիր պատրիարքից կորզեր 100 հազար ակչե։ Հովակիմից սկսած մինչև Հակոբ եպիսկոպոս Պոլսեցին (1848 թ.) պատրիարքական աթոռին հերթականորեն բազմել են մոտ 82 անձնավորություններ։ Վերջին հարյուրամյակում դրամի ավելի շատ կարիք զգացող սուլթանները առանց պատճառի փոխել են սրանց, երբեմն նույն մարդուն երկու անգամ նշանակելու արտոնություն տվել և ամեն անգամ էլ ստացել սահմանված հարկագումարը։ Փաստերը ցույց են տալիս, որ սուլթանները ժամանակի ընթացքում բարձրացրել են պատրիարքության գինը։ 1657 թ. Թովմաս Բերիացին մեծ վեզիր Քյոփրյուլու Մեհմեդ փաշայից պատրիարքության հրովարտակ է ձեռք բերել վճարելով 400 000 ակչե[5]։ Պատրիարքները միաժամանակ պարտավոր էին նոր վեզիրին տալ 500 ղուրուշ, վեզիր-փոխանորդին՝ 250 ղուրուշ, չավուշ բաշուն՝ 200 ղուրուշ[6]։ Մի խոսքով, հայ հոգևորականությունը օսմանյան կենտրոնական կառավարության համար եկամտի կարևոր աղբյուր էր։ Ով տրամադրում էր մեծ գումար, նա էլ ձեռք էր բերում բարձր պաշտոն։

Կ. Պոլսի հայ համայնքին և ոչ մահմեդական այլ հպատակներին վերաբերող թուրքական պաշտոնական ֆերմանները հիմնականում ամփոփված են թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկի «Ստամբուլի XVI դարի կյանքը» խորագրով փաստաթղթերի ժողովածուում[7]։ Առաջաբանում հեղինակը նշում է, որ բոլոր վավերագրերը վերցված են Ստամբուլի պետական արխիվից։ Յուրաքանչյուրին՝ ըստ բովանդակության, տրված է համապատասխան վերնագիր։ Իսկ ֆերմանների վերջում նշված տարեթվերը ցույց են տալիս, որ դրանք հրապարակվել են սուլթան Սուլեյման I-ի (1520—1566), սուլթան Սելիմ II-ի

---

2 Գիրք Ժ, Մանր մատենագիրք, ԺԵ—ԺԹ դդ., հրատ. Գյուտ Աղանյանց. Թիֆլիս, 1912, էջ 219—228։

3 Նույն տեղում, էջ 248։

4 Թուրքական արծաթյա դրամ։

5 Մ. Զուլալյան. Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ. Երևան, 1980, էջ 232։

6 Ղ. Ինճիճեան. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. հ. 5, 2-րդ մաս, Վենետիկ, 1804, էջ 117։

7 Ahmet Refik. On altıncı asırda İstanbul hayatı (1553—1591). 2-ci basım. İstanbul. 1935.

(1566—1574) և սուլթան Մուրադ III-ի (1574—1595) ժամանակաշրջանում։ Սուլթանական այս հրովարտակները բովանդակում են եկեղեցիների և այլ բարեպաշտական շինությունների քանդման, դավանափոխության, կրոնական ծիսակատարությունների և քրիստոնյա բնակչության ազգային տարազի հարցում եղած սահմանափակման, գինու վաճառքի արգելման վերաբերյալ և այլ բնույթի նյութեր։

Սուլթանական այս հրովարտակներից իմանում ենք, որ սուլթան Սելիմ I-ի ժամանակ Կ. Պոլսի եկեղեցիներից շատերը քանդվել են[8]։ Իսկ Սուլթան Սուլեյմանի գահակալության շրջանում, Կ. Պոլսի կադիին ուղղված հատուկ ֆերմանով քանդվել է Սուլու-մանաստրի (Ս. Գևորգ) հայկական եկեղեցուն կից կառուցված շինությունն ու սահմանափակումներ են դրվել կրոնական ծիսակատարությունների վրա. «Իմ բարձր հրամանագիրը առնելուդ պես քանդել տուր շարիաթի սկզբունքներին հակասող շինությունը։ Միևնույն ժամանակ թույլ չտաս իրենց հնագույն եկեղեցիներում ծնծղա խփելու, բարձր ձայնով երգելու և գինի խմելու։ Պետք եղածի պես զգուշացրու հիշյալ վանքի քահանաներին, որ եթե այսուհետև շարիաթին կամ իմ բարձր հրամանին հակառակ որևէ շինություն կառուցեն, նույնպես ենթարկվելու է քանդման»[9]։

Հարկ է նշել, որ հայկական և թուրքական պատմագրական աղբյուրներում ևս եկեղեցիների քանդման կամ մզկիթի ձևափոխման փաստերը շատ են։ Հայտնի է, որ Կ. Պոլսի գրավման հաջորդ օրը Ս. Սոֆիա տաճարը վերածվեց մզկիթի։ Նույն ճակատագրին արժանացան նաև Ս. Առաքյալների տաճարը և այլ եկեղեցիներ։ Սուլթանական հրովարտակով արգելվեց նաև նոր եկեղեցիների կառուցումը։

Այս չարաբաստիկ երևույթը շարունակվեց նաև հետագա դարերում ոչ միայն Կ. Պոլսում, այլև պատմական Հայաստանի քաղաքներում և գյուղերում։ Այս կապակցությամբ XVI դարի ժամանակագիր Հովհաննիսիկ Ծարեցին նշել է. «Իսկ ՌԼԲ (1583) թվականին, դարձեալ հրաման եղև ի Մուրատ խոնդկեարէն զօրապետաց և զօրաց իւրոց՝ ելանել ի վերայ Յէրևանայ և առնուլ զնա։ Եւ եկին իսկ և աւերեցին, և բազում եկեղեցիք քակեալ, զքարինս ի շինումն բերդին տանէին, որ և կամեցան զմեծ եկեղեցին, որ Յերկու երեսի ասի, ևս քակել»[10]։

Մի այլ ժամանակագիր Էրզրումի բերդում կատարված ավերածությունների մասին հայտնել է հետևյալը. «...Բազում եկեղեցիք, զորն երևին և զորն արարեալ են մզկիթ և զորն քակեալ կան։ Եւ է գերեզման սրբոյն Սահակայ և Յօսեփայ, որ այժմ եկեղեցին անարատ և է ի ձեռս անհաւատից»։ «Եկեղեցիք բազումք, որ այժմ է ի ձեռս Տաճկաց անկեալ կան, զորն արարին ամբարանոյք և զորն քակեալ և քայքայեալ են այժմոյս չեն երևիլ»[11]։

Իսկ XVII դարի թուրք հանրահայտ ճանապարհորդ Էվլիա Չելեբին Կարսում եկեղեցիները մզկիթի վերածելու մասին արձանագրել է հետևյալը. «Կարսում գտնվող «Սուլեյման էֆենդի» մզկիթը մուսուլմանական հավատի ոճով կառուցված, շքեղ արտաքինով լավ սրբավայր է։ [Նախկինում] այն քրիստոնեական եկեղեցի է եղել և ձևափոխվել է մզկիթի։ «Հյուսեյն քեղխուդա» մզկիթը նախապես եղել է քրիստոնեական հոյակապ մի տաճար, որը կոչվել է «Կարմիր եկեղեցի», սակայն սուլթանական հրամանագրով այն ևս ձևափոխվել է մզկիթի և այդպես փրկվել անհավատների ձեռքից»[12]։

Սուլթանական ֆերմաններից իմանում ենք, որ նույնիսկ նախկին եկեղեցիների վերանորոգման համար անհրաժեշտ էր դիմել կայսերական դիվանին

---

8 Նույն տեղում, էջ 45։

9 Նույն տեղում, էջ 27։

10 Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան. հ. 2, Երևան, 1956, էջ 244։

11 Նույն տեղում, էջ 563, 564։

12 Эвлия Челеби. Книга путешествия, вып. 3, М., 1983, с. 197.

և հատուկ թույլտվություն ստանալ։ Մահմեդականներից կազմված հանձնաժողովը ստուգում, արձանագրում էր վերանորոգման ենթակա կետերը և այնուհետև տալիս էր արտոնությունը այն պայմանով, որ նորոգումը կատարվեր նախկին շինության նյութով և միևնույն չափսերով։ Այս մասին եկեղեցիների նորոգման վերաբերյալ սուլթան Համիդ I-ի հրովարտակում (22 հունվար 1774 թ.) ասված է. «Նախապէս ուր ուրեք և իցէ քաղաքի մօլլայն և այլք կարդացողք և տաճիկք մեծամեծք, գնացեալ աչօք իւրեանց տեսցեն և քայքայեցեալ աւերեալ տեղեացն վերահասու լիցին, երկայնութիւնն և լայնութիւնն այնր եկեղեցւոյն ըստ բնականի շինութեանն՝ ոչ աւելի և ոչ պակաս՝ զննիցեն՝ տեսցեն և վկայեսցեն և ի գիրս աւանդեսցեն հէօճէթիւ, ապա յետ այնր՝ հրամայեցեալ է զաւերեալ տեղիս նորոգել և շինել ոչ ավելի և ոչ պակաս, մի լիցին ձեռնամուխ բայլք, զի մի յետոյ վնասիցին»[13]։

Եկեղեցիների ստուգման վերաբերյալ սուլթան Աբդուլ Համիդ I-ի ֆերմանում նշված է, թե ինչպես մի շարք մոլեռանդ թուրքեր իրենց չարամիտ նպատակներով օգտագործել են եկեղեցիների վերանորոգման առիթը և անտեղի բողոքներ ներկայացրել կառավարական պաշտոնատար անձանց և մահմեդական հոգևորականությանը։ Սրանք, օգտագործելով առիթը, իրենց հերթին անարգել գործադրել են հայ ռայայի նկատմամբ իրենց թշնամանքի ու ատելության կիրքը. «Այլև յոմանս քաղաքս և գիւղս, և յայլս նահանգս ոչ գլուխ խոնարհեալ ցուցանելով բարձրագոյն մերոյս հրամանի առ նախանձու, կամ վասն կաշառս առնելոյ և կամ վնասս հասուցանելոյ մաքառին ընդ խրղճալի հայոց ազգին և երթեալ առ մօլլայն, առ վօյվօտայն և առ մեծամեծ անձինս բառնալով՝ դրդեն զնոսա ի բարկութիւն, զի կամ տուգանօք վնաս հասուցեն և կամ զնորոգեցեալ տեղիսն քայքայեսցեն, մեծամեծքն տէրութեան իմոյ, հավատացեալ նոցին նախանձախնդիր խօսից՝ զօրացուցանեն զբարկութիւնս իւրեանց, և լինին վրեժխնդիրք խղճալի բայային, զի կրկին տուգանք և փող առցեն, և զծարավս ագահութեանց յագեսցուցեն, և եթէ ոչ տայք զտուգանս ասեն բայային ի բանտ և ի տանջանս մատնեմք զձեզ, որով երկուցեալ վշտացուցանեն զազգն հայոց, և նոքա ոչ կարացեալ տանին զայսպիսի նեղութիւնն, թողումն զտեղիս և զտունս և փակողին անտի, լինելով ցիր ու դան և ոմանք ևս ի բանտ արդեւեալք և խոշտանկեալ։ ախ վայ մեզ գրաւեն զկեանս իւրեանց»[14]։ Այնուհետև սուլթանական ֆերմանում նշվում է, թե ինչպես նոր պաշտոնի անցած կադիները, մոլլաները, հարստանալու տենչով համակված, զանազան որոգայթներ են հյուսում և տուգանքներով, կաշառակերությամբ նեղում և վշտացնում հայ ռայային։

Փաստերը ցույց են տալիս, որ XVII—XVIII դդ. ընթացքում ևս այս կամ այն պատրվակով հիմնահատակ քանդել են մեծ թվով եկեղեցիներ։ Բերենք մի օրինակ Թոքաթին վերաբերող թուրքական վավերագրերից. «1720 թ. հոկտեմբերին Թոքաթում Քառասուն[մանկանց] եկեղեցին ընդարձակելու համար երբ կառավարությունից թույլտվություն է ձեռք բերվում, մահմեդական բնակչությունը գազազելով (22 շեվվալ, կիրակի օրը), եկեղեցու վերանորոգման աշխատանքները սկսելու ժամանակ աղմուկ աղաղակ բարձրացնելով, հարձակվում են, եկեղեցին քանդում, իսկ վանքն էլ այրում»[15]։ Այս իրադարձությունը արձանագրված է նաև հայկական աղբյուրներում։ Թոքաթում պահվող «Պատկերահանի Ավետարան» կոչված մի ձեռագիր հիշատակարանում նշված է. «Ֆէրման բերին զսուրբ քառասնից եկեղեցին նորոգելու, առին հրաման և նորոգիցին մինչև ոչ թամամիլն ժողովեցան Թոխաթու այլազգիքն ամենայն գրոհ տուեալ հասին ի սուրբ Քառասունք և քակեցին»[16]։

---

13 Մանր մատենագիրք, էջ 250—251։

14 Նույն տեղում էջ 251։

15 H. T. Çinllioglu. Tokat tarıhı. 2-cı kısım, 1950, s. 34—35.

16 Մանր մատենագիրք, էջ 378։

Աստվածատուր, Հովհան և Առաքել ակնեցիների ժամանակագրության մեջ (XVIII դար) Ակնում և շրջակայքում եկեղեցիների քանդման մասին խոսելիս նշվում է հետևյալը. «Դարձեալ թուին ՌՄԼԲ (1783) որ մտաք Ստամպոլ Տաճիկներն արգուհալ էին տուեր թագաւորին, թե Զոպի Մուստաֆան նոր ժամ է շինել տուեր. թագաւորն ալ խափուճիպաշին թային արաւ, թէ «գնա տես թէ սուտ է, թէ իրաւ»։ Մեծ պասին իքինճի (երկրորդ) կիրակին (մարտի 12-ին) խափուճիպաշին եկաւ, ելաւ ժամուն վրայ. Տաճկները ոտք կոխեցին, թէ ժամ է պարիսպ չէ։ Խափուճին ալ մնացածն ալ քակել տուաւ, քարն աստիս անդին տէվր ընել տուաւ։ Շատ ստակ գնաց թե խափուճուն, թէ խատուն, իլամին, կարծեմ թէ ճ(100) քեսէ ստակ գնաց, պատն ալ մնաց այնպէս երեսի վրայ»[17]։

XVII դարի հայ ականավոր հրապարակախոս և պատմագիր Երեմիա Քյոմուրճյանը ևս սրտի կսկիծով տալիս է թուրք տիրակալների կողմից քրիստոնյա եկեղեցիները քանդելու, թալանելու, հրդեհելու նկարագրությունները, ինչպես նաև ժողովրդի դառը բողոքը. «Յայն ժամ և սուգ առնոյր երկրին և ողբայր երկիր վասն դիպուածոյ մերում թշվառութեանս, զի ի նոյն ժամու յորում քանդէին տաճարք՝ լինէր որոտ ահագին և արև ծածկեցաւ և հողս սաստկագին յոյժ յոյժ մինչև ամենայն սեռից միանգամայն յարտասուս հարեալ՝ զաղաղակս իւրեանց յերկինս տարածէին ընդ հողմոյն և փոշոյն, որ բարձրանայր յերկրէ, և ծուխն ալեօքն փրփրայր և բարձրանայր ընդ պարիսպն և անձրև գայր»[18]։

Շարիաթը քրիստոնյաներին զրկում էր բազմաթիվ ազատություններից։ Քրիստոնյան իրավունք չուներ մահմեդական թաղամասերում բնակություն հաստատելու։ 1809 թ. մեծ վեզիր Յուսուֆ Զիա փաշան (1809—1811 թթ.) Թոքաթից անցնելու ընթացքում երբ տեղեկանում է, որ մահմեդական տներում քրիստոնյա վարձակալներ են ապրում, հրամայում է նման մարդկանց անմիջապես հեռացնել մահմեդական թաղերից, փաստարկելով, որ այդ երևույթը հակառակ է շարիաթի սկզբունքներին[19]։ Այս կարգը մի անգամ ևս հիշեցվում է 1872 թ. սուլթան Աբդուլ Ազիզի (1861—1876) արձակած հրամանագրով և շեյխ ուլ-իսլամի հաստատած ֆեթվայով։ Այս հրամանագրում շատ պարզ ասվում է, որ «այսուհետև մուսուլմանական թաղամասերում գտնվող տներում ըստ օրենքի պիտի բնակվեն միայն մահմեդականները»[20]։

Խտրականություն է եղել նաև բնակարանների կառուցման չափերի խնդրում։ Այս կապակցությամբ թուրք տարեգիր Շանի Զադեն գրել է. «...Հնուց ի վեր ընդունված կարգով մուսուլմանների շենքերի երկարությունը 12 արշին էր, իսկ ռեայաներինը՝ 10 արշին, ավելին արգելված էր։ Ռեայաների դասի շենքերի համար ընդամենը 10 արշին հատկացված լինելով, այն հողամասը (արսա), որի վրա կառուցվում էր շենքը, շատ էր նեղ, շենքերի միջև ընկած տարածությունը նույնպես նեղ էր, իսկ շենքերը ցածր էին»[21]։

Մահմեդական հոգևոր և աշխարհիկ վերնախավի համար սկզբունքային հարց էր այլահավատ հպատակների մահմեդականացումը, որի իրականացման համար նրանք գործադրում էին ամեն տեսակի բռնություն։ Օսմանյան պետության կողմից նվաճված երկրներում տեղի բնակչությանը մահմեդականացնելու ուղղությամբ խիստ և համատարած միջոցներ են ձեռնարկվել։ Առաջին հերթին ավատատերերից պահանջվել է հավատափոխ լինել, հակառակ դեպքում սպառնացել են նրանց հողերը բռնագրավել։ Բազմաթիվ փաստեր կան, որոնք վկայում են հայ ավատատերերի բռնի մահմեդականացման և հրաժարվողների հողերի հափշտակման մասին։

---

17 Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 473։

18 Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմուրճեանի. Երուսաղեմ, 1939, էջ 386։

19 Հ. Զինլիօղլու. Նշվ. աշխ. 3-րդ մաս, էջ 55։

20 Düstür. Tertip-i evvel. Istanbul. 1300, c. 4, s. 375. (արաբատառ)

21 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. բ, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան. Երևան, 1964, էջ 250։

Ա. Ժելյազկովան, բալկանյան երկրներում բռնի մահմեդականացման քաղաքականության մասին խոսելիս, հենվելով թուրքական ֆերմանների ու այլ վավերագրական նյութերի վրա նշում է, որ նույնիսկ քաղաքային բնակչության ամենացածր խավը դիմել է հավատափոխության, նախ, որպեսզի աղատվի ծանր հարկապահանջությունից և երկրորդ՝ ստանա մահմեդականությունը ընդունողի համար սահմանված նվերներն ու դրամական բարձր պարգևը։ Իր հետազոտության վերջում Ա. Ժելյազկովան, ընդհանրացնելով, նշել է այն կարևոր գործոնները, որոնք նպաստում էին մահմեդականության բռնի տարածման քաղաքականությանը։ Դրանք են. Սրբազան պատերազմների (ջիհադ) ընթացքում մահմեդական կրոնի մոլեռանդության սաստկացումը, գերեվարությունը, մանկաժողովը և ծանր հարկապահանջությունը[22]։

Թուրք պատմաբան Հ. Թյունչերի հրապարակած թուրքական միջնադարյան կանոնադրություններում ևս պարզ նշվում է, որ մահմեդականությունը ընդունելու դեպքում քրիստոնյան ազատվում էր իսպենջի հարկ վճարելուց. «Ոչ մահմեդական ռայայից սիփահին իսպենջի հարկ է գանձում։ Հետագայում եթե ոչ մահմեդականը դավանափոխ լինելով մահմեդականություն ընդունի, սիփահին իրավասու չէ նրանից իսպենջ գանձելու։ Միմիայն բենանքի հարկ կարող է գանձել։ Այս մասին գոյություն ունի կայսերական ֆերման»[23]։

Իսկ նրանց համար, ովքեր հրաժարվում էին մահմեդականությունից և ձգտում էին կրկին վերադառնալ իրենց նախկին հավատին, սահմանվում էր խիստ պատիժ։ Բանտային խոշտանգումներից կարող էր ազատվել նա, ով վերջնականապես կվերադառնար դեպի մահմեդականությունը։

Ահա թե ինչ է գրում այդ մասին միջնադարի հայ ժամանակագիր Գրիգոր Դարանաղցին. «Տաճիկք մեծ վարձք համարելով զքրիստոնէից ուրանալ զքրիստոս և ի Մահմեդի օրէնս և ի կրօնս դառնալ, զխաչ և զեկեղեցի բեկանել և խորտակել և հավատացեալք, որ ոչ հաւանին Մահմեդի և չար կրօնից նորին, ազգի-ազգի տանջանօք չարչարեն և հրով այրեն և համարեն պաշտօն աստուծոյ մատուցանել»[24]։

Իսկ Մուշից Կ. Պոլիս ուղարկված մի բողոքագրում ասվում է. «Խլաթա մեջ հայ կին մը սաստիկ ծեծելով թեն ու գլուխը ջարդեցին զորով տաճիկցնելու համար»[25]։

Զանգվածային բռնի մահմեդականացման լավագույն օրինակ կարող է հանդիսանալ Համշենի բնակչության հավատափոխությունը։ Համշենահայերը՝ բուն Համշենում, Կարադերեի շրջանում և Ճորոխի հովտում մահմեդականություն են ընդունել տասնամյակներ տևած համառ պայքարից հետո։ Համշենի հայության կողմից մահմեդականությունը բռնի ընդունելու և թրքանալու մասին կարևոր տեղեկություն է տալիս Ղ. Ինճիճյանը. «Բնակիչք երկրին յառաջագոյն հայք էին, այլ ի յետս ծէ գարուն և ի սկիզբն ԺԸ երրորդին առհասարակ հանդերձ ամենայն շրջակայ գիւղօրէիւք դարձան ի տաճկութիւն սակս բռնութեան հարկապահանջութեան...»[26]։ XIX դարի վերջին տասնամյակներին արդեն այդ շրջաններում մահմեդականությունն ըստ ամենայնի զանգվածային տարածում էր ստացել[27]։

---

22 А. Желязкова. Некоторые аспекты распространения ислама на балканском полуострове в XV—XVIII вв.—Османская империя, сб. статей, М., 1986, с. 113—115.

23 H. Tüncer. Osmanlı Imparatorlugunda toprak hukuku. Ankara, 1962, S. 77.

24 Գրիգոր Դարանաղցի. ժամանակագրութիւն. Երուսաղեմ, էջ 467—468։

25 Մանր մատենագիրք, էջ 493։

26 Ղ. Ինճիճյան. նշվ. աշխ., էջ 396։

27 Լ. Խաչիկյան. Էջեր համշենահայ պատմությունից.—«Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 2, էջ 138։

Մահմեդականների և ոչ մահմեդականների միջև խտրականություն կար սովորական կենցաղային հարցերում։ Քրիստոնյան չէր կարող իր ցանկացած ձևով հարսանիք կատարել ու հուղարկավորություն անել պատշաճ ծիսակատարությամբ։ Չէր կարող նաև մահմեդականին հատուկ զգեստներ և կոշիկներ կրել և ձի նստել նրա ներկայությամբ։ Անդրադառնալով մահմեդական թուրքերի իրավական դրությանը, Կ. Մարքսը գրել է· «Սոցիալական ինչպիսի դրության մեջ էլ լինի, թուրքը պատկանում է արտոնյալ կրոնին և ազգության։ Միայն նա իրավունք ունի զենք կրելու և ամենաբարձր դիրք ունեցող քրիստոնյան պարտավոր է ամենացածր խավին պատկանող մահմեդականին ճանապարհ զիջելու»[28]։

Հասարակական անբարո երևույթների և քրեական հանցագործությունների մասին սուլթան Սելիմ II-ի ժամանակ կազմված օրենքի մեջ նույնպես նկատվում են խտրականության փաստեր։ Քրեական հանցագործություններին վերաբերող հոդվածների վերջում նշվում է, որ «եթե վերոհիշյալները տեղի ունենան անհավատների [քրիստոնյաների] հետ, կամ արտոնյալ իրավունքներից օգտվող [օտարականների] հետ, թող որ հարկը նրանցից գանձվի կրկնակի չափով»[29]։

XVII դարի սկզբներին Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում ճանապարհորդած Սիմեոն Լեհացին ևս մանրամասն նկարագրում է այն հարստահարություններն ու ճնշումները, որոնց ենթակա էր սուլթանական բռնապետության տակ հեծող հայ ժողովուրդը։ Սիմեոն Լեհացին կենցաղային խտրականության մասին խոսելիս նշել է, որ գավառական քրիստոնյաները զրկված էին լավ չուխա հագնելու կամ մեծ տուն ու այգի ունենալու իրավունքից։ Նրանց արգելված էր անգամ ձի, ջորի կամ էշ հեծնելը։ Հակառակ պարագային պետք է «ուլախ» կոչված դրամական տուգանք վճարեին[30]։

Ահա թուրքերեն մի փաստաթուղթ (թեզքերե), որը տրված է եղել կարնեցի երևելի սարաֆ Մահտեսի Մանուկ Աստվածատրյանին (Ալահվերտի ամիրա). «Օսմանյան պետության բարձր պաշտոնատներում իր մատուցած ծառայություններով համբավ ձեռք բերած, սարաֆների դասակարգին պատկանող հիշյալ [անձնավորությունը] հիվանդ և ծեր լինելու պատճառով սույն թեզքերեն տրվեց։ Մահմեդականի ձի նստելու կերպին չմանվելու պայմանով»[31]։

Թուրքական ֆերմանները միանգամայն հաստատում են, որ հրեայի, հույնի, հայի հագած տարազը թանկարժեք կերպասից կամ ոտնամանը արժեքավոր կաշվից չպետք է լինեին։ Թուրքերը գլխապանի գույնից և ձևից պետք է ճանաչեին, թե մարդիկ որ կրոնի կամ ինչ դիրքի են պատկանում։ Հենց այս մասին էլ 1577 թ. սուլթան Մուրադ III-ը Ստամբուլի կադիին անում է հետևյալ կարգադրությունը. «Այսուհետև հրեաների և քրիստոնյաների հագած չուխաները, իշքարլատները[32], խալաթները չպետք է պատրաստված լինեն ատլասից, կամկայից[33] և այլ մետաքսյա գործվածքներից։ Ֆերաջենները[34] նույնպես չպետք է մետաքսից լինեն, այլ աստառացու կտորից։ Դյուլբենտը (շղարշ) նույնպես բարակ և նուրբ տեսակի չի լինելու և իրենց գլխի փաթթոցներն էլ ոչ այնքան շքեղ։ Մի խոսքով, չպետք է իրենց արտաքինով և շարժուձևերով նմանվեն մահմեդականներին... Նրանք ովքեր չեն հնազանդվի և կվարվեն հակառակ իմ բարձր հրամանին, ենթարկվելու են պատժի։ Անհնա-

---

28 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения. Т. 9, М., 1957, с. 6.

29 Книга законов султана Селима I. Публикация текста, перевод, терминологический комментарий и предисловие А. С. Твертиновой. М., 1969, с. 35.

30 Սիմեոն Լեհացի. Ուղեգրություն. Վիեննա, 1931, էջ 193—194։

31 «Բազմավեպ», 1934, № 1, էջ 31։

32 Իտալերեն skarlato բառից։ Կարմրագույն վենետիկյան չուխա։

33 Մետաքսե գունավոր գործվածք։

34 Լայն թևերով ծածկոցանման հագուստ, որի մեջ փաթաթվում էին մահմեդական կանայք։

ղանդներին կալանքի տակ առնելով կբանտարկես և կտեղեկացնես»[35]։ Ոչ մահմեդականներին վերաբերող այս սահմանափակումները հաստատվում են նաև տվյալ ժամանակաշրջանի հայկական աղբյուրներով։ XVI դարի մի ժամանակագրության մեջ արձանագրված է. «Եւ ի ՌԻԹ (1580) թւին Հայոց նեղացեալ Մուրատ խոնդքեարն ի հրէից և ի քրիստոնէից համարձակութենէն և վերացոյց զփակիղն ի գլխոց նոցա, և սաստիկ ետսախ արար և սահմանեաց զսև գտակ ղնելն, բայց ի տեղիս կաշառս ետուն և առին զհրաման դնել զփակիղ, լետ ԺԸ ամի (1598 թ.) ապա Կոստանդինուպօլիս. և այլ բազում քաղաքք մնացին գտակով»[36]։

Երեմիա Քյոմուրճյանը իր օրագրության մեջ նշում է. «Իսկ յայգուցն մունետիկ աղաղակեալ յամենայն քաղաքս՝ եասաղ արարին զփակեղս քրիստոնէից ղխայտ և զկապուտն զի բնավ մի երևեսցի։ Եւ ի մեծամեծաց մինչև ցփոքունս եդին գտակ ի գլուխս և ղալփաղ և զհանդերձս ի վատ և ի տգեղ ամենևիմբ»[37]։

Հետագա դարերում ևս արգելված է եղել ազգային տարազի ազատ կրումը. այդ է վկայում XVIII դարի թուրք պատմագիր Վասըֆը։ Նա իր տարեգրության մեջ 1757 թ. դեպքերը շարադրելիս, «ռայաների հագուստի կանոնի» տակ նշում է հույն, հայ և հրեա համայնքների սահմանափակմանը վերաբերող սուլթանական հրամանագրի մասին[38]։ Տարօրինակ է, որ ժամանակակից թուրք պատմաբան Յավուզ Էրջանը սարսափն խնդրում գոյություն ունեցող այդ խտրականությունը փորձում է մեկնաբանել տնտեսական դժվարությունների հողի վրա[39]։ Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ խտրականություն է եղել կենցաղային ամենապարզ հարցերում ևս։ Օրինակ, միջնադարյան կանոններից մեկում կարդում ենք. «[Բաղնիքում] միևնույն սրբիչը քրիստոնյային և մահմեդականին տալը արգելված է։ Քրիստոնյաներին տրվող սրբիչները պետք է նշանով առանձնացված լինեն։ Վարսավիրները միևնույն ածելիով չեն կարող մահմեդականի և քրիստոնյայի գլուխը ածիլել»[40]։ Մի խոսքով, շարիաթի դոգմաները չէին կարող հավասարություն դնել մահմեդականի և ոչ մահմեդականի միջև։ Չնայած քրիստոնյան էլ միևնույն պետության հպատակն էր, բայց նա միշտ պիտի ենթարկվեր ու հարկատու լիներ մահմեդականին։

Արևմտյան Հայաստանում մանկաժողովի (դևշիրմե) կիրառման քաղաքականությունը ևս կատարյալ մի պատուհաս էր հայ ժողովրդի համար։ Արևմտյան Հայաստանի նահանգներում մանկաժողովը սկսել է կիրառվել 1519 թ.։ Այդ մասին Անանուն Սեբաստացին իր ժամանակագրության մեջ նշում է հետևյալը. «Ի թւին ՋԿԸ (1519) բարկութիւնն Աստծոյ սաստկացաւ և սուլթան Սելիմն տղայ ժողովեց ի քրիստոնէից»[41]։ Վկայություն կա նաև այն մասին, որ հայերից մանկահավաք կատարվել է դեռևս 1464 թ.։ Մի ձեռագիր հիշատակարանում ասված է հետևյալը. «...Իսկ անօրեն արքայն տաճկաց ժողովեաց ղքրիստոնէից մանկուսն և եբեր Ըստամբօլ, իսկ եպիսկոպոսն եկեալ ի հետ մանկացն և ե-եր ոթուղթ ազատութեան հայոց, իսկ անօրէն արքայն ոչինչ համարեցաւ զթուղթն»[42]։

Մանկաժողովին վերաբերող պատմագիտական և հատկապես վավերագրային նյութերը Ստամբուլի արխիվներից հավաքել և երկու հատորով հրա-

---

35 Ա. Ռեֆիկ. նշվ. աշխ., էջ 51։

36 Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 516։

37 Օրագրություն Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի, էջ 400։

38 Թուրքական աղբյուրներ, հ. Ա, էջ 215։

39 Belleten, 1984, № 188, s. 1142.

40 Հ. Թյունջեր. նշվ. աշխ., էջ 62։

41 Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան, 1951, էջ 169։

42 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. մասն Բ, Երևան, 1956, էջ 302։

տարակել է թուրք պատմարան Ի. Ուզունչարշըլը[43]։ Հրապարակված հրովարտակներից իմանում ենք, որ մանկաժողովը տեղի է ունեցել յուրաքանչյուր երկու կամ հինգ տարին մեկ անգամ։ Մանկաժողովի պաշտոնին նշանակված վերակացուն սուլթանական ֆերմանը ձեռքին շրջում էր իրեն հատկացված կադիությունների (վարչադատական միավոր) և հավաքագրում ութից քսան տարեկան ֆիզիկապես առողջ և ամրակազմ քրիստոնյա տղաներին։ Այնուհետև պահակների հսկողության ներքո տղաներին բերում էին Ստամբուլ և հատուկ գրանցման դաֆթարներով ներկայացնում ենիչերիների աղային։ Այստեղ փոխելով նրանց հագուստները, հագցնում էին դեղին գույնի դոլամա[44], իսկ վրայից էլ կարմիր աբա[45]։ Մանկաժողովի ենթարկված յուրաքանչյուր խմբին, Ստամբուլ հասնելուց հետո, տրվում էր երկու-երեք օր հանգիստ։ Այնուհետև փոխում էին նրանց անունները, կատարում մահմեդական հավատը ընդունելու երդման արարողություն և ապա ենթարկում թլփատման։ Պարզվում է, որ մանկաժողովի ենթարկված տղաների հագուստն ու ճանապարհածախսը, «կուլ ակչեսի» (Ստրուկի ակչե) անվան տակ, գանձել են նրանց բնակավայրերից, 80 կամ 100 ակչեի սահմաններում։ Փաստերը վկայում են, որ այս գումարը XVII դարում հասել է մինչև 600 ակչեի[46]։

Վերոհիշյալ արարողությունից հետո հատուկ զորանոցային պայմաններում տղաներին դաստիարակում էին մոլեռանդ մուսուլմանական ոգով և դարձնում ենիչերի։ Մանկաժողովին վերաբերող հրովարտակներից տեղեկանում ենք նաև, որ զինվորական ծառայության փոխարեն հաճախ տղաներին որպես ձրի աշխատուժ աշխատացրել են նավաշինարաններում, անտառներում, շինարարության վրա և այլուր։ Իսկ գեղեցիկ, վայելչակազմ տղաներին օգտագործել են պալատական զանազան աշխատանքներում[47]։

Մանկաժողովի ընթացքում երեխաներին ծնողներից բաժանելու տխուր պատկերը, որը զուգակցվում էր թուրք պաշտոնյաների գործադրած վայրագություններով, մի կատարյալ ողբերգություն էր։ Մանր զրկանքներից և հատկապես հավատափոխությունից խույս տալու նպատակով հաճախ տղաները փորձել են փախուստ տալ կամ էլ ծնողները կաշառքի ուժով ամեն կերպ ձրգտել են ազատել իրենց երեխաներին այդ չարաբաստիկ աղետից։ Այսուհանդերձ այդպիսիների նկատմամբ ձեռնարկվել են կտրուկ միջոցներ և հայտնաբերվածներին կրկին վերադարձրել են ենիչերների աղային։ Այս մասին Կեսարիո բեյին ուղղված սուլթանական հրովարտակներից մեկում ասված է. «Արդ, հրամայում եմ, երբ իմ բարձր ֆերմանը տեղ հասնի, հետամուտ եղիր այս գործին և իմ բարձր հրամանով դևշիրմեի ենթարկված այն տղաներին, որոնք փախուստի դիմելով հավատափոխ են եղել, հավաքիր, անունները դրելով դաֆթար կազմիր և վստահելի անձանց հետ ուղարկիր Ստամբուլ։ Նրանց հսկող անձանց կարգադրիր, որ ճանապարհին խիստ ուշադիր լինեն»[48]։

Ի. Ուզունչարշըլը ընդունում է, որ բալկանյան ժողովուրդներից բացի հայերն ու վրացիները ևս ենթարկվել են մանկաժողովի։ Նույնիսկ բերում է մի քանի օրինակներ, որտեղ ցույց է տրվում, թե դևշիրմեի ենթարկված հայ պատանիները հետագայում հասել են բարձր պաշտոնների։ Պարզվում է, որ XVI դարի հանրահայտ ճարտարապետ Կոջա Սինանը նույնպես դևշիրմեով հավաքագրված երեխաներից է։ «Հանրահայտ ճարտարապետ Սինանը,—

---

43 I. H. Uzunçarşılı. Osmanlı devleti teşkilatından kapukulu ocakları. Ankara, c. I. 1943, c. 2, 1944.

44 Արտահագուստ (թուրքերեն փաթաթել բառից). այդպես է կոչվել, որովհետև փեշի ծայրերը փաթաթվելով մտցվել են մեջքի մեջ։ Հագուստի վերին մասը մինչև գոտկատեղը կոճկվել է, թևերը եղել են լայն, բազուկների մոտ՝ նեղ։

45 Կոշտ բրդյա կտորից վերարկու։

46 Ի. Ուզունչարշըլը. նշվ. աշխ., հ. 1, էջ 18։

47 Նույն տեղում, էջ 126։

48 Նույն տեղում։

գրում է Ի. Ուզունչարշըլը՝—սուլթան Սելիմ Ա-ի ժամանակ Կեսարիայից առաջին անգամ մանկաժողովի ենթարկված երեխաներից էր»[49]։ Սակայն Ի. Ուզունչարշըլը ճարտարապետ Սինանի մասին խոսելիս ստույգ չի նշում նրա ազգությունը։ Փաստերը ապացուցում են, որ Սինանը ազգությամբ եղել է հայ։ Այդ հաստատվում է Թուրքիայի մինիստրների խորհրդի արխիվում պահվող մի վավերագրից[50]։ Այս վավերագրի հիման վրա Բարս Թուղլաջը (Բարսեղ Թուղլաջյանը) նշում է հետևյալը. «Կոջա Սինանը, որը XVI դարում օսմանյան ճարտարապետական արվեստի զարգացման գործում իր խոր ազդեցությունն է ունեցել, ծագումով եղել է հայ»[51]։

Յավուզ Էրջանը, աղավաղելով փաստերը, աշխատում է ժխտել պատմաբանների կողմից ընդունված այն թեզը, որ դևշիրմեն, իբր, պատմականորեն մեծ դեր չի խաղացել քրիստոնյաներին զանգվածաբար մահմեդականացնելու և թուրքացնելու խնդրում[52]։ Յավուզ Էրջանը, համենայն դեպս, պետք է որ ծանոթ լիներ Ի. Ուզունչարշըլի արձանագրած հետևյալ փաստին. «Յրլդրրրմ հայազեղից հետո հպատակ քրիստոնյա երեխաներին մանկաժողովի ենթարկելու համար կազմվել է մի օրենք։ Այս նոր օրենքով Ռումելիի բոլոր ոչ մահմեդական ժողովուրդները աստիճանաբար պիտի մահմեդականացվեին։ Իսկ մահմեդականացված այդ զինվորների քանակով հզորանալու էր թուրքական բանակը»[53]։

Իրոք որ, զինվոր հավաքագրելու այս եղանակով օսմանցիները նախ կրրկնապատկում էին իրենց զինվորների քանակը և միևնույն ժամանակ աշխատում էին մեջտեղից վերացնել քրիստոնյաների ամենաառնական տարրերին։ Այս նույն միտքը հաստատում է նաև անգլիացի հանրահայտ պատմաբան Հ. Ա. Գիբբոնսը, նշելով, որ բալկանյան ժողովուրդների շրջանում բանակի համար զինվոր հավաքագրելը իրենց համար առավել մի ծանր հարված էր, քան հարեմի համար աղջիկների հավաքը, որովհետև ընտրում և հավաքում էին ամենավայելչակազմ և ուժեղ պատանիներին[54]։

Անկասկած մանկաժողովը մի հզոր միջոց էր թուրք կառավարողների ձեռքին՝ իրենց համաձուլման քաղաքականության իրականացման ճանապարհին։ Այստեղ տեղին է հիշատակել XVI դարի թուրք պատմագիր Մուստաֆա Սելանիկի էֆենդիի եզրակացությունները դևշիրմեի մասին։ Նա իր «Պատմության» մեջ գրել է. «Ժամանակի իշխողները տղաների դևշիրմեի գործում անխիղճ են եղել և նվերի անվան տակ շատ մեծ կաշառքներ են վերցրել, ինչպես գայլն է հարձակվում ոչխարի հոտի վրա, այնպես էլ նրանք ագահորեն հարձակվել են երկրի ռայաների վրա։ Հարուստ ռայաներից խլել են անթիվ անհամար հարստություն, իսկ աղքատ ռայաներից՝ նրանց զավակներին, քանդել են նրանց տունն ու տեղը»[55]։

Հարկ է նշել, որ XVI—XVII դդ. նվաճողական քաղաքականության հետևանքով տեղի ունեցած երկարատև պատերազմական գործողությունները Թուրքիայի և Իրանի միջև ավերիչ հետևանքներ ունեցան հատկապես Հայաստանի համար։

Տվյալ ժամանակաշրջանի հայ պատմիչները, ժամանակագիրներն ու հիշատակարանների հեղինակները, ամենայն իրավամբ, խիստ մռայլ գույներով

---

49 Նույն տեղում, էջ 20։

50 Başbakanlik sarşivi, mühimme defterleri serisi, nu. 123, s. 240. Pars Tuğlacı. Osmanlı mimarliğinda batilaşma dönemi ve Balyan ailesi. Istanbul, 1981, s. 1.

51 Նույն տեղում։

52 Տե՛ս Belleten, 1984, № 188, s. 1137.

53 Ի. Ուզունչարշըլը. նշվ. աշխ., հատ. 1, էջ 13։

54 H. A. Gibbons. Osmanli Imparatorluğunun kuruluşu. Istanbul, 1923, s. 109 (արաբատառ թուրքերեն թարգմանություն).

55 Տե՛ս Թուրքական աղբյուրներ, հ. Բ., էջ 137։

են նկարագրում հայ ժողովրդի վիճակը թուրքական և պարսկական տիրապետության տակ։ Այդ ժամանակաշրջանը հայկական աղբյուրներում բնորոշվում է որպես «վրդովման» ու «ալեկոծման» շրջան։ Բերենք մի հատված Հովհաննես Արճիշեցու տարեգրությունից (XVI դար), որտեղ հեղինակը ականատեսի աչքով նկարագրել է 1531—1534 թթ. թուրքերի և պարսիկների միջև տեղի ունեցած պատերազմները Վանա լճի շրջակա գավառներում. «Աւաղ զիմ հոգիս հայրք և եղբայրք, թէ քանի չարիք գործեցաւ ի յայս հեծեալ շարժութեանցս և ի վրդովմանցս,—գրել է Հովհաննես Արճիշեցին,—քանի քաղաք և գաւառ աւերեցան և քանի վանորայք և եկեղեցիք քակտեցան, քանի մեծատունք աղքատացան, և վաճառականք թալանեցան, քանի քրիստոնեայք գերի վարեցան, և անմեղ տղայքն ի յանօրէնքն խառնեցան և չեմ կարնար գրել չարիքն, զոր վերին աշխարհն քաշեց ևս առաւել ծովու բոլորս»[56]։ Իսկ Ա. Դավրիժեցին այսպես է պատկերում այդ պատերազմները. «Եւ ի շարժմանէ այսց երկուց տիեզերակալացս՝ որք ղարթուցեալք են ի պատերազմ. եթէ Սարդարն՝ որ եկն յարևմտից, և թէ շահն՝ որ ի կողմս արևելից՝ թէ որքան աւերումն և քանդումն եղև աշխարհի, թէ ի դալն և թէ ի դառնալն, թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եղեալ ի վերայ ժողովրդեանն...[57]։

Գանձվող բազմաթիվ հարկերի պատճառով ռայայի վիճակը այնքան էր ծանրացել, որ գյուղերից ցիր ու ցան լինելով՝ սկսել էին փախչել այս ու այն կողմ։ Տվյալ ժամանակաշրջանի թուրքերեն մի անանուն ուղերձում, որն ուղղված է սուլթան Մուստաֆա II-ին (1695—1703), կարդում ենք. «Իմ տիրակալ, Ձեզ համար շատ կարևորություն ունեցող ռայայի վրայից անհրաժեշտ է վերացնել անտեղի հավաքվող հարկերը։ Միևնույն ժամանակ բարձր հրաման արձակեք Օսմանյան կայսրությունում հաշվառում անցկացնելու մասին։ Բեյլերբեյիներին և սանջակբեյիներին կայսերական հանձնարարական տվեք, որպեսզի այսուհետև ռայայից չգանձվեն կաֆթան բահայի, սելամիլեյի և նալ բահայի հարկերը[58], քանի որ ռայայի վիճակը առանց այն էլ շատ ծանր է»[59]։

Ոչ մահմեդական բնակչությունից գանձվող ամենածանր հարկերից մեկը գլխահարկն էր (ջիզիեն)։ Ամենածանր հարկ լինելով հանդերձ, այն երբեք կայուն չափ չի ունեցել։ Թեև թուրքական կանոնագրքերում, որպես օրենք, ընդունված է եղել 25 ակչե գումար, սակայն այն ունեցել է խիստ փոփոխական բնույթ և տարբեր ժամանակներում հասել է մինչև 240 ակչեի։ Նախ գլխահարկի հավաքման ընթացքում պաշտոնյաները գործադրել են կոպիտ կամայականություններ, իսկ պատերազմների ընթացքում պետության կողմից ապօրինի գլխահարկ է գանձվել տարին 2 անգամ։ Հակոբ Կարնեցին ևս անդրադարձել է Օսմանյան կայսրության կենտրոնական և տեղական իշխանությունների հարկային ծանր քաղաքականությանը։ Նա իր ինքնագիր հիշատակարաններում ահա թե ինչ է գրում. «Ով եղբայրք, յորժամ հանդիպիք ի յայս թղթիս մի մեղայդրէք գրիս, զի Տաճիկք խիստ կու նեղացընին հարկապահանջութեան և խիստ տրտմեալ էի և իբր զերազի գրեցի»[60]։

Երկարատև այդ պատերազմների ընթացքում հայերի և մյուս քրիստոնյա բնակչության համար աղետալի հետևանքներ է ունեցել նաև խաղաղ բնակչության գերեվարությունը և նրանց՝ որպես ստրուկների վաճառքը Կ. Պոլսում և այլ մեծ քաղաքներում։ Էվլիա Չելեբիի տվյալներով ստրուկների առևտրով զբաղվող վաճառականների թիվը միայն Կ. Պոլսում եղել է մոտ 2000, «որոնք Կովկասից, Վրաստանից և Ղրիմից իբրև նվիրական պատերազմի ապրանք, ստրուկներ են բերել և վաճառել»[61]։

---

56 Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 231։

57 Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ. Վաղարշապատ, 1896, էջ 78։

58 Անօրինական գանձվող հարկեր։

59 Belleten, 1969, № 129, s. 24—34.

60 Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 584։

61 Թուրքական աղբյուրներ, հ. Գ, էջ 36։

Միջնադարի հայ պատմիչ Սիմեոն Տիգրանակերտցին ահա թե ինչպես է նկարագրում քրիստոնյաների գերեվարման տխուր պատկերը. «Ի թուականիս հայոց ՌԻԹ (1580)... բազում զօրս առաքեաց (սուլթան Մուրադը—Ա. Փ.) ի Պարսկաստան... և աւերեցին զբազում երկիր՝ և զամենեսեանսն սուր սուսերի մաշեցին. և ի քրիստոնէից բազում և անթիւ գերի վարեցին... զոմանս սրոյ ճարակ տուին, և զբազումս գերեցին, զայր և զկին, զմեծ և զփոքր, զաղջկունս և զանմեղ տղայս ի քրիստոնէից, և այլ բազում ոճիրս գործեցին, զոր ոչ կարէ ոք ընդ գրով արկանել կամ լեզուով ճառել զդառնութիւն և զնեղութիւն ժամանակիս...»[62]։

Սիմեոն Լեհացին ևս ականատեսի աչքով նկարագրել է և տվել Կ. Պոլսի «Եսիր բազարում» հայ գերիների վաճառահանման սրտաճմլիկ պատկերը. «Որք ծերք են և պառաւք նստել են։ Իսկ զաղջուկնս և զմանկունս, զտղայս և զաղվորերես կանայս տէլլալնին առեալ ի ձեռս դնոսա՝ դուրջ ածէին և ծախէին որպէս զձի և զջորի. և զայս ժողովեալ ի տեղի ինչ կամ ի մօյտանի՝ իբրև ոչխարս ի փարախի։ Իսկ գնօղքն եկեալ բանային զերեսս և զծօցս կոյս աղջկանց և զամենայն մարմինս նոցա շօշափէին յոտաց մինչև ի գլուխ, զի մի վնաս, խոց կամ այլ ինչ սպի վեր ունիցին։ Եւ նոքա լուռ և անմռունչ կային, և զորս հաճէին՝ գնէին, և որոշեալ ի հօրէ, ի մօրէ կամ ի քվերաց և յեղբարաց բաժանեալ առեալ տանէին ի տուն»[63]։

Հայ կրոնական առաջնորդներն ու հեղինակություն վայելող անձինք անտարբեր չեն մնացել և ամեն կերպ պայքարել են՝ կանխելու և վերջ տալու հայ բնակչության գերեվարության ողբերգական երևույթին։ Հակոբ Կարնեցին վկայում է, որ 1630 թ. կաթողիկոսի, ինչպես նաև Էրզրումի հայ մեծահարուստ վաճառականների օանքերով որամի ուժով ազատել են մեծ թվով հայ գերիներ և ուղարկել իրենց նախկին բնակավայրերը[64], իսկ 1724 թ. (հավանաբար օգոստոս ամսին) հայոց Կոլոտ պատրիարքը բողոք է հայտնել մեծ վեզիր Իբրահիմ փաշային, նկատի ունենալով, որ Կովկասի կողմերից մեծ թվով հայ գերիներ են բերված Կ. Պոլսում վաճառելու համար[65]։ Հայերը ինչպես նաև մյուս ոչ մահմեդական բնակիչները Կ. Պոլսում հաճախ ձգտել են գնել իրենց ազգակից ստրուկներին և պահել իրենց տներում։ Սակայն XVI դարում արձակված սուլթանական հրովարտակներում նկատում ենք, որ Կ. Պոլսի ոչ մահմեդական հարուստներին խստիվ կերպով արգելվել է ստրուկ գնելը։ Օրինակ, 1560 թ. սուլթան Սուլեյմանի առձակած մի ֆերմանում կարդում ենք. «Այսուհետև հրեաների և քրիստոնյաների մոտ գերիները ծառայություն չպետք է անեն, ազատ արձակված գերիները հանձնվելու են մահմեդականներին, իսկ գերի համարվողները վաճառվելու են նույնպես մահմեդականներին»[66]։

Բնորոշ է, որ XVII դարի թուրք պատմագիր Կոչի բեյը իր ժամանակին խիստ քննադատության է ենթարկել օսմանյան Թուրքիայում ժողովրդական ոանգվածներին ճնշող և շահագործող շրջանների չարաշահումներն ու բռնությունները, հարկերի գանձման գործում արմատացած ապօրինությունները, երկրում ստեղծված անապահովությունը, թալանն ու կողոպուտը, ենիչերիական բանակի և այլ զորամասերի սանձարձակությունները[67]։

Հայ ժողովրդի ծանր դրության մասին տեղին է հիշատակել նաև 1584 թ. Աղարիա կաթողիկոսի կատարած հետևյալ դառը եզրահանգումը. «Եմք իբրև դմի այդի առանց պարսպի և պահնորդի ցրուեալք աստ և անդ, և եմք զետ ոչ-

---

62 Հ. Մանանդյան, Հ. Ա ճառյան. Հայոց նոր վկաները (1155—1843). Վաղարշապատ, 1903, էջ 413—414։

53 Սիմեոն Լեհացի. նշվ. աշխ., էջ 18—19։

64 Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 566։

65 Տե՛ս Գ. Բամպուքճյան. Հովհաննես պատրիարք Կոլոտ և իր աշակերտները. Ստամբուլ, 1984, էջ 43։

66 Ա. Ռեֆիկ. նշվ. աշխ., էջ 43—44։

67 Թուրքական աղբյուրներ, հ. Բ, էջ 230։

խար ի մէջ գայլոց և որպես զգառինք ի մէջ արիւծոյ, և ամենեքին եմք դերի ի ներքոյ անողորմ տէրանց, որք վասն ամենայն օր տանջեն և շարչարեն զմեզ ագահութեամբ և ոչ կշտանան ընաւ զի տնանկ և աղքատ եմք և ոչ կարեմք շարժել քայլ մի առանց երկիւղի մեծ փորձանաց»[68]։

Այսպես ուրեմն։ Վերևում բերված փաստերը վճռականորեն հերքում են ժամանակակից թուրք պատմարանների ու քաղաքական գործիչների այն պրնդումները, թե իբր օսմանյան սուլթանները հանդուրժողական քաղաքականություն են վարել հպատակ ազգերի նկատմամբ, թե քրիստոնյա ժողովուրդները ունեցել են արտոնություններ և չեն ենթարկվել ազգային ու կրոնական ճնշման ու հալածանքների։

ПОЛОЖЕНИЕ ЗАПАДНЫХ АРМЯН ПО ФЕРМАНАМ ОСМАНСКИХ СУЛТАНОВ (XVI—XVIII вв.)

А. А. ПАПАЗЯН

Резюме

В многочисленных ферманах османских султанов, как и в средневековых армянских источниках, содержатся важные сведения о тяжелом положении армянского народа, находившегося под гнетом османского деспотизма.

68 Ա. Պապազյան. Պատմություն կաթուղիկե վարդապետության ի հայս. Վիեննա, 1878, էջ 309։